ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2302-Ա « 09 » հունիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի Հ.1597-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1.Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 28-ի «Երևանի քաղաքապետի 2019 թվականի մայիսի 7-ի հ.1532-Ա, օգոստոսի 15-ի հ.2943-Ա և դեկտեմբերի 23-ի հ.4778-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու, Եր.Քոչարի փողոցի հ.5/2 շենքի անշարժ գույքի զբաղեցրած հողամասերի համար կնքված վարձակալության պայմանագրերը միավորելու, պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, պայմանագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» հ.1597-Ա որոշման մեջ /այսուհետ՝ Որոշում/ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանի 1-ին պարբերությունում՝ «151.1քմ» բառերը փոխարինել «150.1քմ» բառերով.

2) Որոշման նախաբանի 1-ին և 2-րդ պարբերություններում ՝«Եր.Քոչարի փողոցի հ.5/2 հասցեում գտնվող հասարակական /խանութ/ նշանակության» բառերը փոխարինել «Եր.Քոչարի փողոցի հ.5/2 հասցեում գտնվող հասարակական /խանութ/ նշանակության շինության» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ